ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 20-ին, 2020թ.

Շտապ թողարկման համար

Դիմել՝ Գայանե Սարգսյանին
«Ուրբան» կայունզարգացման հիմնադրամ
Ալեք Մանուկյան 9,
Երևան, 0070 Հայաստան
Հեռ՝ (00 374 60) 612075
(00374) 94369815
Էլ. հասցե՝ info@urbanfoundation.am

ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՆԵՐ ԵՎ ԽԵԼԱՑԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ջրային ռեսուրսների թափանցիկ և արդյունավետ կառավարման նպատակով

ԵՐԵՎԱՆ—Այսօր Էրեբունի պլազա բիզնես կենտրոնի «Ուրարտու» սրահում տեղի ունեցավ «Առցանց հարթակներ և խելացի մոտեցումներ» խորագրով միջոցառումը: Ներկայացվեցին մի շարք էլեկտրոնային գործիքներ՝ մշակված ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի շրջանակում:

Այդ էլեկտրոնային գործիքները կնպաստեն տեղական և ազգային մակարդակներում ստորերկրյա ջրային ռեսուրսների առավել թափանցիկ և արդյունավետ կառավարմանը: Գործիքները նախատեսված են տարաբնույթ խնդիրների լուծման համար:

- ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունից ջրօգտագործողներին տրամադրվող թույլտվությունների գործընթացը կդառնա առավել դյուրին և արդյունավետ:
- Վեդի քաղաքի բնակիչներն այսուհետ կկարողանան գնահատել ջրի հետ կապված ծառայությունների մատուցումը, անհրաժեշտության դեպքում բողոքել և առաջարկություն ներկայացնել ծառայություն մատուցողներին:
- Արմավիր ջրօգտագործողների ընկերության հարթակը նպաստում է ջրային ռեսուրսների մասնակցային կառավարմանը՝ ջրօգտագործողներին հնարավորություն տալով հաշվարկել ոռոգման համար իրենց անհրաժեշտ ջրաքանակը և տեղեկատվություն ստանալ ոռոգման ջրի մատակարարման վերաբերյալ:
- Մշակվել է հեռախոսային հավելված, որը ցույց է տալիս մոտակա ցայտաղբյուրի ճշգրիտ վայրը և հեռավորությունը:
- Որպես թափանցիկ էլեկտրոնային կառավարման միջոց՝ ծրագրի գործընկեր 10 համայնքներն կիրառում են համակարգչային հեռախոսային գործիքը, որը արձագանքման և վերհասկման մեխանիզմ է ջրօգտագործողների համար:

Այս էլեկտրոնային հարթակները և գործիքները հնարավոր է դարձել ստեղծել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ: Նպատակն է՝ նպաստել Արարատի և Արմավիրի համայնքներին մշտապես դիտակետում պահել ստորերկրյա ջրերի նվազման խնդիրը և ապահովել ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ կառավարումը:

«Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի նպատակն է խթանել Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների պատասխանատու կառավարումն ու օգտագործումը՝ հանրային մասնակցության և իրազեկման միջոցով, ինչպես նաև խթանել վարքագծի փոփոխությունները՝ ստորգետնյա ջրերի արդյունահանման կրճատումը ապահովելու համար:

Ծրագիրն իրականացվում է «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի, «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ-ի և ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի կողմից:

###